



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆ

« 14 » 03 20 25 թ.

Թիվ 69-Ձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի ԹԻՎ 42-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2016 թվականի օգոստոսի 10-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քաղաքացիական ծառայողների գործուղման կարգը հաստատելու մասին» թիվ 42-Լ հրամանի N 1 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) հավելվածի 1-ին կետից հանել «և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

2) հավելվածի 3-րդ կետում «(Հայաստանի Հանրապետության, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տարածք, ինչպես նաև օտարերկրյա պետություններ)» բառերը փոխարինել «, ինչպես նաև օտարերկրյա պետություններ» բառերով.


3) հավելվածի 5-րդ կետից հանել «և Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում» բառերը.

4) հավելվածի 14-րդ կետում «և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում» բառերը փոխարինել «տարածքում» բառով.

5) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 30.1-ին կետով.

«30.1. Առանձին դեպքերում՝ Կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալի առաջարկությամբ և Կոմիտեի նախագահի համաձայնությամբ, օտարերկրյա պետություններ գործուղված Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը (խմբի կամ հանձնախմբի դեպքում՝ դրա ղեկավարը) գործուղման արդյունքում ձեռքբերված մասնագիտական գիտելիքները և աշխատանքային հմտությունները փոխանցում է սեմինար-քննարկման ձևաչափով, տասնօրյա ժամկետում:»:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետին:



Ա. ՊՈՂՈՍՅԱՆ